Luys Lույս®

ՀՀ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐ-ՀՈԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ 1
   1.1. Արդյունաբերություն 2
   1.2. Շինարարություն 3
   1.3. Ծառայություններ 4
   1.4. Առևտուր 5
2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ 6
3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ 8
4. ՓՈԽԱՐԺԵՔ 9
5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ 10
   5.1. Բյուջեի եկամուտները 10
   5.2. Բյուջեի ծախսերը 11
   5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը 12
   5.4. Պետական պարտք 12
6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ 14
   6.1. Գնաճ 14
   6.2. Ավանդներ 14
   6.3. Վարկեր 15
   6.4. Դրամական փոխանցումներ 18
7. ԱՄՓՈՓՈՒՄ 18

1. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՈՒԹՅՈՒՆ

2023թ. տարեսկզբին դեռևս պահպանվում էին նախորդ տարվա դրական տնտեսական ազդեցությունները՝ ապահովելով բավական բարձր տնտեսական ակտիվության ցուցանիշներ (ՏԱՑ): Սակայն, ՏԱՑ-ի տեմպը աստիճանաբար նվազում է, քանի որ հունիսից սկսած՝ համեմատվող ժամանակահատվածում արդեն իսկ արտացոլված են բարձր աճ ապահոված գործոնների (ՌԴ-ից մարդկանց և կապիտալի ներհոսք, արտահանման աճ) ազդեցությունները: Այս պայմաններում ընթացիկ տարվա հոկտեմբերին ՏԱՑ-ը կազմել է 6.0%, որը թեև բարձր է նախորդ ամսվա ցուցանիշից, սակայն զգալիորեն զիջում է տարեսկզբի բարձր աճերին: Կուտակային ՏԱՑ-ի ցուցանիշը աստիճանաբար դանդաղում է և հունվար-հոկտեմբերին կազմել է 9.2%՝ հունվար-սեպտեմբերի ցուցանիշի համեմատ դանդաղելով 0.5 տոկոսային կետով:

Գծապատկեր 1. Տնտեսական ակտիվության ցուցանիշը, կուտակային, %



2023թ. հունվար-հոկտեմբեր ամիսների ՏԱՑ-ի աճը հիմնականում պայմանավորված է եղել առևտրի աճով, որի նպաստումը ՏԱՑ-ին կազմել է 9.1 տոկոսային կետ: Ծառայությունների աճի տեմպն էականորեն դանդաղել է, ինչի արդյունքում փոքրացել է դրա նպաստումը՝ դառնալով 2.8 տոկոսային կետ: Շինարարության ճյուղը նույնպես դրական նպաստում է ունեցել ՏԱՑ-ին՝ 0.8 տոկոսային կետով, մինչդեռ արդյունաբերության նպաստումը շարունակել է լինել բացասական՝ կազմելով -0.1 տոկոսային կետ:

Գծապատկեր 2. Տնտեսական ակտիվության ցուցանիշը և ճյուղերի նպաստումները 2023թ. հունվար-հոկտեմբեր ամիսներին, տոկոսային կետ



1.1. Արդյունաբերություն

Գծապատկեր 3. Արդյունաբերության համախառն թողարկման իրական կուտակային աճը, %



Արդյունաբերության ոլորտում շարունակում են գրանցվել բավական ցածր ցուցանիշներ: Արդյունաբերության ոլորտում հոկտեմբերին գրանցվել է փոքր աճ՝ 0.6%-ի չափով, սակայն կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշը մնացել է բացասական տիրույթում՝ կազմելով -0.5%: Սա այն դեպքում, երբ նախորդ տարվա ցուցանիշները նույնպես ունեին բացասական դինամիկա, ինչը նշանակում է, որ համեմատվող տարվա ընթացքում արդյունաբերության թողարկման ծավալները նույնպես ցածր մակարդակում են եղել (այլ հավասար պայմաններում այն պետք է հանգեցներ աճի տեմպի արագացմանը):

Հունվար-սեպտեմբեր[1] ամիսների տվյալներով արդյունաբերության անկումը հիմնականում պայմանավորված է եղել հանքարդյունաբերության 4.5% անկմամբ (նախորդ ամսվա համեմատ այն մեղմվել է 0.6 տոկոսային կետով), որի բացասական նպաստումը կազմել է շուրջ 1.0 տոկոսային կետ: Մշակող արդյունաբերության ոլորտում տնտեսական ակտիվությունը նույնպես բացասական դինամիկա է ունեցել՝ նվազելով 0.4%-ով և ընդհանուր արդյունաբերության անկմանը նպաստելով 0.3 տոկոսային կետով: Ընդ որում, մշակող արդյունաբերության ոլորտում նվազումը հիմնականում պայմանավորված է հիմնային մետաղների (պայմանավորված հանքարդյունաբերության նվազմամբ), սննդամթերքի, հագուստի և խմիչքների արտադրության կրճատմամբ:

«Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում» ոլորտում գրանցվել է 4.2% աճ՝ ընդհանուր արդյունաբերության աճին ունենալով 0.5 տոկոսային կետով դրական նպաստում, իսկ «ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում» ոլորտում՝ 5.6% աճ, որն արդյունաբերության աճին նպաստել է 0.1 տոկոսային կետով:

1.2. Շինարարություն

Գծապատկեր 4. Շինարարության իրական կուտակային աճը, %



Շինարարության ոլորտի աճը շարունակում է մնալ բարձր մակարդակում, սակայն այստեղ նույնպես նկատվում է աճի տեմպի դանդաղում: Այսպես, հոկտեմբերին շինարարության աճը կազմել է 13.6%՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 2.1 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ, կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների աճը նույնպես նվազել է՝ կազմելով 16.4% և նախորդ ամսվա համապատասխան ցուցանիշի համեմատ դանդաղելով 0.6 տոկոսային կետով:

[1] Արդյունաբերության ոլորտի հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

Շինարարության ոլորտում բարձր աճը հիմնականում պայմանավորված է բնակարանային շինարարությամբ, ինչն էլ իր հերթին բացատրվում է հիպոթեքային վարկերի համար վճարված տոկոսավճարների՝ եկամտային հարկից հետվերադարձի ծրագրի գործողությամբ: Սակայն, վերջին ամիսներին նկատվում է անշարժ գույքի շուկայում գործարքների պասիվություն, ինչն էլ իր ազդեցությունն է ունենում շինարարության ոլորտի աճերի վրա:

1.3. Ծառայություններ

Գծապատկեր 5. Ծառայությունների իրական կուտակային աճը, %



Ծառայությունների ոլորտի աճի տեմպը նույնպես էականորեն նվազել է: Ծառայությունների ոլորտում օգոստոսին գրանցվել է ընդամենը 2.1% աճ՝ նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 2.5 տոկոսային կետով: Պատճառը հիմնականում այն է, որ նախորդ տարվա ցուցանիշներում արդեն իսկ ներառված են դեպի ՀՀ մարդկանց և կապիտալի ներհոսքի արդյունքում ձևավորված ծառայությունների ոլորտի բարձր ծավալները, հետևաբար այս տարվա ծառայությունների ակտիվությունը փոքր չափով է գերազանցում նախորդ տարվա ցուցանիշներին: Արդյունքում կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների աճի տեմպը նույնպես էապես նվազել է՝ կազմելով 12.1% և նախորդ ամսվա համեմատ դանդաղելով 1.3 տոկոսային կետով:

Ծառայությունների ոլորտում, ըստ հունվար-սեպտեմբեր ամիսների տվյալների[2], աճին մեծամասամբ՝ 8.4 տոկոսային կետով նպաստել է «տեղեկատվություն և կապ» ենթաոլորտի շուրջ 48.6% աճը: Էական նպաստում են ունեցել նաև «տրանսպորտ» և «կացություն և հանրային սնունդ» ենթաոլորտների աճերը, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 3.4 և 1.9

[2] Ծառայությունների ոլորտի հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

տոկոսային կետ: «Ֆինանսական և ապահովագրական գործունեություն» ոլորտում անկումը խորացել է՝ կազմելով 7.4% (նախորդ ամսվա 6.2 անկման փոխարեն), ինչը 2.2 տոկոսային կետով բացասական նպաստում է ունեցել ծառայությունների աճին:

1.4. Առևտուր

Գծապատկեր 6. Առևտրի ծավալների իրական կուտակային աճը, %



Առևտրի աճի տեմպը, սակայն, ունեցել է արագացման միտում: Ի տարբերություն տնտեսության մյուս ճյուղերի՝ առևտրի ոլորտում գրանցվել է աճի տեմպի արագացում: Հոկտեմբերին առևտրի աճը կազմել է 26.3%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 4.5 տոկոսային կետով: Հունվար-հոկտեմբեր ամիսների աճի տեմպը նույնպես արագացել է՝ կազմելով 23.3% և 0.4 տոկոսային կետով բարձր լինելով հունվար-սեպտեմբերի ցուցանիշից:

2. ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՈՒՐ

Գծապատկեր 7. Արտահանման կուտակային աճը[3], %



Արտահանման աճի տեմպը զգալիորեն դանդաղել է վերջին ամիսներին, սակայն հոկտեմբերին ունեցել է արագացման միտում: 2023թ. հոկտեմբերին արտահանման աճը կազմել է 14.4%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով շուրջ 13.0 տոկոսային կետով: Սակայն, կուտակային՝ հունվար-հոկտեմբեր ամիսների ցուցանիշը շարունակել է դանդաղել՝ կազմելով 38.5%՝ նախորդ ամսվա 43.0%-ի դիմաց: Արտահանման աճի տեմպի արագացման բացատրությունը հնարավոր կլինի ուսումնասիրել արտահանման՝ ըստ ապրանքախմբերի աճերի ցուցանիշների հրապարակումից հետո:

2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսների[4] արտահանման աճը հիմնականում պայմանավորված է եղել «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» ապրանքախմբերի համապատասխանաբար 1.8, 2.2 և 4.1 անգամ աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր արտահանմանը կազմել են համապատասխանաբար 14.3, 14.1 և 10.4 տոկոսային կետ: Վերջին երկուսի աճի տեմպերն էականորեն նվազել են հունվար-օգոստոսի համեմատ, ինչն էլ հենց պայմանավորել է արտահանման աճի տեմպերի դանդաղումը սեպտեմբերին՝ արտացոլելով վերարտահանման միտումների փոփոխությունը՝ հատկապես տրանսպորտային միջոցների և սարքավորումների մասով:

Արտահանման աճին բացասական նպաստում են ունեցել «հանքահումքային արտադրանք» ապրանքախմբի, ինչպես նաև «կենդանի կենդանիներ և

[3] Արտահանման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:
[4] Արտաքին առևտրի հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

կենդանական ծագման արտադրանք» և «բուսական ծագման արտադրանք» ապրանքախմբերի արտահանման ծավալների համապատասխանաբար 12.7%, 38.7% և 21.9% նվազումները:

Գծապատկեր 8. Ներմուծման կուտակային աճը[5], %



Ներմուծման աճի տեմպը նույնպես արագացել է: Ներմուծման ծավալների աճը 2023թ. հոկտեմբերին կազմել է 22.4%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 16.6 տոկոսային կետով: Հունվար-հոկտեմբեր ամիսների աճի տեմպը, սակայն, շարունակել է դանդաղել՝ կազմելով 42.9%՝ հունվար-սեպտեմբերի 46.2%-ի դիմաց: Թեև արտահանման և ներմուծման վիճակագրությունն ըստ ապրանքախմբերի դեռևս չի հրապարակվել, սակայն և՛ ներմուծման, և՛ արտահանման աճի տեմպերի միաժամանակ արագացումը հուշում է, որ այդ զարգացումները կապված են վերարտահանման հետ:

Ներմուծման աճը 2023թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին[6] հիմնականում պայմանավորված է եղել «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ», «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» և «թանկարժեք և կիսաթանկարժեք քարեր, թանկարժեք մետաղներ և դրանցից իրեր» ապրանքախմբերի ներմուծման աճերով, որոնք ընդհանուր ներմուծման աճին նպաստել են համապատասխանաբար 17.1, 12.6 և 9.7 տոկոսային կետով: Միևնույն ժամանակ վերոհիշյալ երկու ապրանքախմբերի՝ «վերգետնյա, օդային և ջրային տրանսպորտի միջոցներ» և «մեքենաներ, սարքավորումներ և մեխանիզմներ» ապրանքախմբերի ներմուծման ծավալների աճի տեմպերն էապես նվազել են հունվար-օգոստոս ամիսների համեմատ՝ պայմանավորելով ներմուծման աճի դանդաղումը:

[5] Ներմուծման նախորդ ամիսների ցուցանիշները վերանայվել են ՀՀ ՎԿ կողմից:
[6] Արտաքին առևտրի հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

3. ԱՇԽԱՏԱՎԱՐՁ[7]

Անվանական աշխատավարձի աճի տեմպը դանդաղում է, սակայն դեռևս պահպանվում է բարձր մակարդակում: Միջին ամսական անվանական աշխատավարձն ընդհանուր տնտեսությունում 2023 թվականի հունվար-սեպտեմբեր ամիսներին նախորդ տարվա նույն ամիսների համեմատ աճել է 16.6%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպը դանդաղել է 0.8 տոկոսային կետով)՝ կազմելով 262,789.0 դրամ: Ոչ պետական հատվածում միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 17.9%-ով (նախորդ ամսվա համեմատ աճի տեմպը դանդաղել է 1.3 տոկոսային կետով)՝ կազմելով 289,245.0 դրամ: Պետական հատվածում միջին աշխատավարձն աճել է զգալիորեն ավելի ցածր՝ 10.0% տեմպով և կազմել 198,022.0 դրամ (պետական հատվածում աշխատավարձի աճի տեմպը նախորդ ամսվա համեմատ արագացել է 0.6 տոկոսային կետով):

Գծապատկեր 9. Միջին ամսական անվանական աշխատավարձի աճը 2022-2023թթ. հունվար-սեպտեմբերին, %



[7] Աշխատավարձի ցուցանիշը հաշվարկվում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացվող (հաշվետու ամսվան հաջորդող 25/26-րդ օրը) եկամտային հարկի և սոցիալական վճարի հաշվառման տվյալների բազայի հիման վրա և հրապարակվում է ՀՀ ՎԿ կողմից՝ յուրաքանչյուր ամսվա վերջին աշխատանքային օրը: Հետևաբար, հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

4. ՓՈԽԱՐԺԵՔ

Գծապատկեր 10. Անվանական փոխարժեքի միտումները, կուտակային աճը (%, աճը նշանակում է ՀՀ դրամի արժևորում) և միջին ամսական անվանական փոխարժեքը (դրամ)



ՀՀ դրամը շարունակում է արժևորված մնալ հիմնական արժույթների նկատմամբ, իսկ ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորման տեմպը էականորեն արագացել է վերջին ամիսներին: Հունվար-հոկտեմբեր ամիսներին ՀՀ դրամի միջին փոխարժեքի՝ ԱՄՆ դոլարի նկատմամբ արժևորման տեմպը կազմել է շուրջ 13.7%, եվրոյի նկատմամբ՝ 11.6%: Վերջիններս, սակայն, ունեն նվազման միտում վերջին ամիսներին: Նույն ժամանակահատվածում, ՌԴ ռուբլու նկատմամբ ՀՀ

դրամի արժևորման տեմպը շարունակաբար արագանում է՝ հիմնականում պայմանավորված ՌԴ ռուբլու արժեզրկմամբ: Հունվար-հոկտեմբերի դրությամբ ՌԴ ռուբլու նկատմամբ արժևորումը կազմել է 39.0%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.7 տոկոսային կետով: Դրամի արժևորման հետևանքներն արդեն իսկ նկատելի են ՀՀ-ից որոշ ապրանքատեսակների արտահանման ծավալների նվազման տեսքով:

5. ՀԱՐԿԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՏՎԱԾ

5.1. Բյուջեի եկամուտները

Պետական բյուջեի ընդհանուր եկամուտների աճի տեմպը որոշակիորեն արագացել է: Պետական բյուջեի ընդհանուր եկամուտները 2023թ. հոկտեմբերին աճել են 15.5%-ով (նախորդ ամսվա աճը կազմել էր 9.3%), իսկ հունվար-հոկտեմբեր ամիսների աճը կայունացել է 14.0%-ի շուրջ: Բյուջեի հարկային եկամուտների աճի տեմպը նույնպես կայունացել է՝ հունվար-հոկտեմբերին կազմելով 15.0% և հունվար-սեպտեմբերի համեմատ մնալով նույն մակարդակում: Հարկային եկամուտների աճի տեմպը, սակայն, դեռևս բարձր է մնում տնտեսական ակտիվության աճի տեմպից:

Գծապատկեր 11. Հարկային եկամուտների կուտակային աճը[8], %



Հարկային եկամուտների աճը հիմնականում պայմանավորված է հիմնական խոշոր հարկատեսակների՝ շահութահարկի (աճը՝ 44.1%), ԱԱՀ-ի (աճը՝ 16.4%) և եկամտային հարկի (աճը՝ 15.1%) աճերով, որոնց նպաստումներն ընդհանուր հարկային եկամուտների աճին կազմել են համապատասխանաբար 5.6, 5.5 և 3.7 տոկոսային կետ: Հարկային եկամուտների աճին բացասական նպաստում են ունեցել պետական տուրքերի 43.7% և բնապահպանական հարկի և

[8] Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

բնօգտագործման վճարի 44.2% նվազումները, որոնք հարկերի աճին հակազդել են համապատասխանաբար 2.7 և 2.3 տոկոսային կետով:

Աղյուսակ 1. Հարկային եկամուտները և պետական տուրքերը՝ ըստ եկամտատեսակների

	2022թ. հունվար-հոկտեմբեր		2023թ. հունվար-հոկտեմբեր	
	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ	Աճը, %	Նպաստումը, տոկոսային կետ
Ընդամենը հարկային եկամուտներ և պետական տուրք	**21.9**	**21.9**	**15.0**	**15.0**
Ավելացված արժեքի հարկ	19.7	6.8	16.4	5.5
Ակցիզային հարկ	9.7	0.7	14.1	0.9
Շահութահարկ	43.3	4.7	44.1	5.6
Պետական տուրք	115.2	4.0	-43.7	-2.7
Մաքսատուրք	-38.8	-2.1	44.8	1.2
Բնապահպանական և բնօգտագործման վճարներ	60.3	2.4	-44.2	-2.3
Այլ հարկեր	18.0	0.5	33.0	1.0
Շրջանառության հարկ	26.7	0.6	27.3	0.7
Եկամտային հարկ	10.0	2.7	15.1	3.7
Սոցիալական վճարումներ	47.7	1.3	42.4	1.4

5.2. Բյուջեի ծախսերը

Գծապատկեր 12. Պետական բյուջեի ծախսերը և դրա բաղադրիչները, մլրդ դրամ



Պետական բյուջեի ծախսերի աճը շարունակել է արագանալ: Ընդհանուր ծախսերի աճը հունվար-հոկտեմբերին կազմել է 14.3%՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.5 տոկոսային կետով: Ծախսերի աճին 10.3 տոկոսային կետով նպաստել է ընթացիկ ծախսերի աճը: Ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (որոնք հիմնականում կապիտալ ծախսերն են) աճել են ավելի արագ տեմպով՝ 32.6%-ով՝ ընդհանուր ծախսերի աճին նպաստելով 3.9 տոկոսային կետով: Սակայն, հունվար-հոկտեմբեր ամիսներին իրականացված ծախսերի ծավալը կազմել է 266.9 մլրդ դրամ, որը ավելի քիչ է, քան նույնիսկ 2023թ. առաջին ինն ամիսների պլանը, որը կազմում է 381.8 մլրդ դրամ (նույն ժամանակահատվածի ճշտված պլանը ավելի մեծ է և կազմում է 394.4 մլրդ դրամ):

5.3. Պետական բյուջեի հաշվեկշիռը

Գծապատկեր 13. Պետական բյուջեի հավելուրդը (պակասուրդը (-), մլրդ դրամ



Պետական բյուջեի հաշվեկշիռը տարվա մեջ առաջին անգամ դարձել է բացասական: ՀՀ պետական բյուջեի ծախսերն ընթացիկ տարվա հունվար-հոկտեմբերին գերազանցել են եկամուտները, ինչի արդյունքում ձևավորվել է բյուջեի պակասուրդ շուրջ 19.0 մլրդ դրամի չափով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում ևս բյուջեն եղել էր պակասուրդային, որի չափը կազմել էր 13.0 մլրդ դրամ: Սակայն պակասուրդի մեծությունը նույնպես հեռու է բյուջեով պլանավորված մակարդակից, որի համաձայն՝ դեռևս հունվար-սեպտեմբերին պակասուրդը պետք է կազմեր 196.2 մլրդ դրամ (իսկ ըստ ճշտված պլանի՝ 248.4 մլրդ դրամ):

5.4. Պետական պարտք

Կառավարության պարտքը շարունակում է աճել՝ հիմնականում դրամային պարտքի հաշվին: 2023թ. հոկտեմբերին ՀՀ պետական պարտքի ԱՄՆ դոլարով արտահայտված ծավալի աճը կազմել է 10.5%՝ նախորդ ամսվա համեմատ

դանդաղելով 3.5 տոկոսային կետով: Իսկ դրամային արտահայտությամբ ՀՀ պետական պարտքն աճել է 12.3%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 1.9 տոկոսային կետով: Կառավարության պարտքը նույն միտումներն է ունեցել՝ դոլարային արտահայտությամբ աճելով 11.2%-ով, իսկ դրամային արտահայտությամբ՝ 13.1%-ով: Ներքին պարտքի աճի տեմպն էականորեն ավելի բարձր է եղել. դրամով արտահայտված ներքին պարտքի ծավալն աճել է 23.4%-ով, իսկ դոլարային արտահայտությամբ արտաքին պարտքն աճել է 4.1%-ով: Ներքին պարտքի կշիռը ընդհանուր պարտքի պորտֆելում մեծացել է՝ հոկտեմբերի վերջի դրությամբ հասնելով 45.0%-ի:

2023թ. հոկտեմբերին պետական պարտատոմսերի տոկոսադրույքները որոշակիորեն աճել են, սակայն նախորդ տարվա համեմատ ավելի ցածր են եղել: Կարճաժամկետ պարտատոմսերի տոկոսադրույքը (եկամտաբերությունը) 2023թ. հոկտեմբերին նախորդ ամսվա համեմատ աճել է 0.3 տոկոսային կետով՝ կազմելով 10.5%, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է 0.9 տոկոսային կետով: Միջնաժամկետ պարտատոմսերի եկամտաբերությունը նույնպես աճել է՝ նախորդ ամսվա համեմատ 0.2 տոկոսային կետով, իսկ նախորդ տարվա նույն ամսվա համեմատ նվազել է 1.0 տոկոսային կետով: Տոկոսադրույքների վերջին ամիսների աճը կարող է պայմանավորված լինել բանկային համակարգում իրացվելիության նվազմամբ, քանի որ էականորեն աճում են նաև վարկավորման ծավալները:

Գծապատկեր 14. ՀՀ կառավարության պարտքի (ԱՄՆ դոլարով) 12-ամսյա աճը, %



6. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

6.1. Գնաճ

Գծապատկեր 15. 12-ամսյա գնաճը, %



2023թ. հոկտեմբերին գնաճը շարունակել է մնալ բավական ցածր՝ գրեթե զրոյական մակարդակում: Ընթացիկ տարվա հունիսից սկսած՝ 12-ամսյա գնաճը գտնվում է գրեթե զրոյական մակարդակում և հոկտեմբերին կազմել է 0.1%: Հունվար-հոկտեմբեր ամիսների միջին գնաճը նույնպես էականորեն դանդաղել է՝ հասնելով 2.5%-ի: ՀՀ ԿԲ-ն, արձագանքելով գնաճային միջավայրի զարգացումներին, արդեն ընդհանուր առմամբ 1.25 տոկոսային կետով նվազեցրել է դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքը՝ հոկտեմբերին հասցնելով այն 9.5%-ի:

6.2. Ավանդներ

Գծապատկեր 16. Ավանդների 12-ամսյա աճը, %





Ավանդների աճի տեմպը կտրուկ նվազել է՝ բազայի էֆեկտի հաշվին: 2023թ. հոկտեմբերի վերջի դրությամբ ավանդների ընդհանուր ծավալի աճի տեմպը նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ կազմել է 13.4%՝ սեպտեմբերի համեմատ դանդաղելով 6.7 տոկոսային կետով: Դանդաղումը հիմնականում պայմանավորված է բազայի էֆեկտով (նախորդ տարվա հոկտեմբերին ավանդների կտրուկ աճով), իսկ ավանդների ծավալը սեպտեմբերի համեմատ շարունակել է աճել: Ավանդների ծավալի աճը պայմանավորված է հիմնականում ռեզիդենտների ավանդների աճով, որը կազմել է 22.1%: Ոչ ռեզիդենտներից ներգրավված ավանդների ծավալը նախորդ տարվա հոկտեմբերի նկատմամբ նվազել է 7.4%-ով, սակայն դա նույնպես պայմանավորված է բազայի էֆեկտով (նախորդ տարվա հոկտեմբերին ոչ ռեզիդենտների ավանդների ծավալները կտրուկ աճել էին, այնուհետև որոշակի նվազել էին ընթացիկ տարվա մարտին):

Գծապատկեր 17. Տնտեսության հատվածների նպաստումներն ավանդների աճին, տոկոսային կետ



Ավանդների աճին առավելապես նպաստել է տնային տնտեսություններից ներգրավված ավանդների աճը՝ շուրջ 9.8 տոկոսային կետով: Ռեզիդենտների ավանդների շարքում էական նպաստում է ունեցել նաև ձեռնարկություններից ներգրավված ավանդների աճը, որի նպաստումը կազմել է շուրջ 5.0 տոկոսային կետ:

6.3. Վարկեր

Վարկերի ծավալների աճի տեմպը շարունակում է էականորեն արագանալ: ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին և ոչ ռեզիդենտներին տրամադրված ընդհանուր վարկերի (արտարժույթով և ՀՀ դրամով) ծավալը 2023թ.

հոկտեմբերին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ աճել է 21.9%-ով՝ նախորդ ամսվա համեմատ արագանալով 2.6 տոկոսային կետով:

Գծապատկեր 18. Վարկերի 12-ամսյա աճերը՝ ըստ վարկառուների ռեզիդենտության, %



Վարկերի աճը տեղի է ունեցել ինչպես ռեզիդենտներին, այնպես էլ ոչ ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճի հաշվին, որոնց աճերը կազմել են համապատասխանաբար 22.1% և 19.2%, իսկ նպաստումները՝ 20.9 և 1.0 տոկոսային կետ:

Գծապատկեր 19. Ռեզիդենտներին տրված վարկերի 12-ամսյա աճը, %



Ռեզիդենտներին տրամադրված վարկերի ծավալների աճը պայմանավորված է ինչպես տնային տնտեսություններին, այնպես էլ իրավաբանական անձանց տրամադրված վարկերի աճով, որոնց նպաստումները կազմել են համապատասխանաբար 11.4 և 10.7 տոկոսային կետ: Ընդ որում, հատկանշական է, որ իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի ծավալների աճի տեմպը

տարեսկզբին բացասական էր, սակայն վերջին ամիսներին մտել է դրական տիրույթ և էականորեն արագացել է՝ հոկտեմբերին հասնելով 21.0%-ի: Հենց իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի ծավալի աճն է հանգեցրել ընդհանուր վարկերի աճի արագացմանը: Իրավաբանական անձանց վարկերի աճը առավելապես արտացոլվում է ծառայությունների (հիմնականում՝ ֆինանսական և ապահովագրական գործունեություն), շինարարության և առևտրի ոլորտներում:

Գծապատկեր 20. Տնտեսության ճյուղերի նպաստումները ռեզիդենտներին տրամադրված վարկերի աճին, տոկոսային կետ



Ռեզիդենտների[9] շարքում վարկերի աճին շարունակում են էական մեծ նպաստում ունենալ հիպոթեքային վարկերը, որոնց աճը կազմել է 28.2%, իսկ նպաստման չափը՝ 5.8 տոկոսային կետ: Սակայն էապես աճել են նաև ծառայությունների ոլորտին տրամադրվող և սպառողական վարկերը, որոնց աճերը հոկտեմբերին կազմել են 36.9% և 26.8%, իսկ նպաստումները ընդհանուր վարկերի աճին՝ 5.8 և 5.7 տոկոսային կետ: Վարկերի աճին նշանակալի նպաստում ունեն շինարարության և գյուղատնտեսության ոլորտի վարկերը, որոնց աճերը կազմել են 42.1% և 28.7%, իսկ նպաստումները՝ 3.6 և 1.6 տոկոսային կետ: Արդյունաբերության ոլորտի կազմակերպություններին տրամադրվող վարկերը դեռևս բացասական դինամիկա ունեն, ինչը պայմանավորված է և՛ հանքարդյունաբերության, և՛ մշակող արդյունաբերության ոլորտներում վարկերի նվազմամբ:

[9] Վարկերի վերաբերյալ վիճակագրական տվյալները ներկայացվում են ինչպես ոլորտային դասակարգմամբ, այնպես էլ ըստ ռեզիդենտության և տնտեսության հատվածների դասակարգման: Տարբեր դասակարգումներով ներկայացվող տվյալները տարբերվում են միմյանցից, ինչը բացատրվում է ՀՀ ԿԲ կողմից տեղեկատվության հավաքագրման տարբերություններով և չի մանրամասնվում:

6.4. Դրամական փոխանցումներ

Գծապատկեր 21. ՀՀ բանկերի միջոցով իրականացվող դրամական փոխանցումների զուտ ներհոսքը, մլն ԱՄՆ դոլար[10]



Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ շարունակում է մնալ ցածր մակարդակում: 2023թ. սեպտեմբերին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 97 մլն ԱՄՆ դոլար՝ էապես ցածր լինելով տարեսկզբի և նախորդ տարվա վերջին ամիսների ցուցանիշներից: Հունվար-սեպտեմբեր ամիսներին դեպի ՀՀ փոխանցված գումարների զուտ ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է 23.1%-ով: Ընդ որում, նվազումը հիմնականում պայմանավորված է արտահոսքի 69.4% աճով, մինչդեռ ներհոսքի աճը կազմել է 23.2%:

7. ԱՄՓՈՓՈՒՄ

1. Տնտեսական ակտիվության աճի տեմպը դանդաղել է, ինչը սպասելի էր՝ հաշվի առնելով բարձր աճ ապահովող գործոնների աստիճանաբար ավելի փոքրացող նպաստումը ՏԱՑ-ին: Վերջին ամիսներին (բացի օգոստոսից) ՏԱՑ-ի ամսական աճերը կայունացել են 6%-ի շուրջ, ինչի արդյունքում կուտակային աճի տեմպը նույնպես նվազում է և հունվար-հոկտեմբերին կազմել է 9.2%: Բազայի էֆեկտի ազդեցությունից ելնելով՝ հետագա ամիսներին ՏԱՑ-ի կուտակային

[10] Ներկայացված է ՀՀ բանկերի միջոցով ֆիզիկական անձանց անունով արտերկրից մուտք եղած և ՀՀ-ից ֆիզիկական անձանց կողմից արտերկիր կատարված ընդամենը ամսական փոխանցումները և դրանց տարբերությունը՝ ԱՄՆ դոլարով:
Հոկտեմբեր ամսվա տվյալները դեռևս չեն հրապարակվել:

ցուցանիշը կշարունակի նվազել, քանի որ ամսական աճի ցուցանիշները կձևավորվեն ցածր մակարդակում:

2. Արդյունաբերության ոլորտի մտահոգիչ զարգացումները շարունակվում են արդեն բավական երկար ժամանակահատված, ինչը նշանակում է, որ ոլորտում առկա են էական խնդիրներ: Արդյունաբերության ոլորտում արդեն շուրջ 6 ամիս շարունակ գրանցվում են բավական ցածր աճի կամ անկման ցուցանիշներ: Ընդ որում, վերջին ամիսներին անկում է գրանցվում ոչ միայն հանքարդյունաբերության, այլ նաև մշակող արդյունաբերության ոլորտներում, ինչը առավել վտանգավոր է: Սա մի կողմից՝ պայմանավորված է հանքարդյունաբերության ոլորտի խնդիրներով (որոշ հանքավայրերի չաշխատելով և պղնձի միջազգային գների նվազմամբ), մյուս կողմից՝ փոխարժեքի արժևորման հետևանքով ՀՀ արտադրանքի մրցունակության նվազմամբ, ինչն ավելի արտահայտիչ է դառնում վերարտահանման աճի տեմպերի դանդաղման պայմաններում: Այդ իրավիճակը կարող է հանգեցնել տնտեսության ներուժի և երկարաժամկետ կայուն աճի հնարավորությունների նվազմանը: Ավելին, արդյունաբերության ոլորտին տրամադրված վարկերը նույնպես նվազում են, ինչը ևս ցուցիչ է ոլորտում ներդրումային ակտիվության նվազման մասին:

3. Պետական բյուջեի կապիտալ ծախսերի թերակատարման խնդիրը այդպես էլ լուծում չի ստանում: Թեև ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնությունները (որոնք հիմնականում կապիտալ ծախսերն են) աճել են բարձր տեմպով՝ 32.6%-ով, սակայն դրանց ծավալը դեռևս հեռու է պլանավորված մակարդակից: Մասնավորապես, հունվար-սեպտեմբեր ամիսների համար պլանավորվել էր իրականացնել 381.8 մլրդ դրամի (նույն ժամանակահատվածի ճշտված պլանն ավելի մեծ է և կազմում է 394.4 մլրդ դրամ) ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ, մինչդեռ հունվար-հոկտեմբերին իրականացվել է պլանի ընդամենը շուրջ 70%-ը (իսկ ճշտված պլանի՝ 67.7%-ը), որը կազմում է 266.9 մլրդ դրամ:

4. Արտերկրից դեպի ՀՀ փոխանցվող դրամական միջոցների զուտ ներհոսքը նախորդ տարվա համեմատ շարունակում է մնալ ցածր մակարդակում: 2023թ. սեպտեմբերին բանկային համակարգի միջոցով դեպի Հայաստան փոխանցված գումարների զուտ ներհոսքը (ներհոսքի և արտահոսքի տարբերությունը) կազմել է 97 մլն ԱՄՆ դոլար՝ էապես ցածր լինելով տարեսկզբի և նախորդ տարվա վերջին ամիսների ցուցանիշներից: Հունվար-սեպտեմբեր ամիսներին դեպի ՀՀ փոխանցված գումարների զուտ ծավալը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ նվազել է՝ հիմնականում պայմանավորված արտահոսքի աճով:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*